№ 207 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 1902 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 № 207

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գլխում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Նամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խմբագրանիւթ տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արժանաւորները. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օպերային ներկայացումները. Նամակ Ասխարադից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Գոլոսի լրագիրներից. Բաղդադի երկաթուղին եւ Ռուսաստանը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հ. Արսէն վ. Այտընեան.

ԱՐԺԱՆԱՒՈՐՆԵՐԸ

Ո՞ւմ ընտրել ձայնաւոր։ Ի՞նչ սկզբունքով առաջնորդվել ընտրութիւնների ցուցակ կազմելու ժամանակ։

Ահա այն հարցերը, որ բնականաբար առաջ են գալիս ամեն մի ընտրութեան ժամանակ։ Եւ բնական պատասխանը լինում է—ընտրել արժանաւորին։

Արժանաւորութեան ամենագլխաւոր յատկանիշները պէտք է լինեն ապագայ ձայնաւորի գործելու ընդունակութիւնը և որոշ պատրաստութիւն ունենալը։ Եթէ ապագայ ձայնաւորը միայն բարի ցանկութիւններ յայտնել գիտէ, իսկ ինքը ծոյլ է, գործից փախչող, անհոգ և զանցառու, այն ժամանակ ձայնաւորի գործունէութիւնը ոչ մի արդիւնք չի առաջացնի. և եթէ դումայի մեծամասնութիւնը կազմված կը լինի այդպիսի ձայնաւորներից, այն ժամանակ դումայի իրան դատապարտած կը լինի անգործութեան կամ շատ վատ գործունէութեան։ Միւս կողմից ցանկալի կը լիներ, որ ձայնաւորը մի որոշ հմտութիւն և պատրաստութիւն ունենար քաղաքի տնտեսութեան որ և է ճիւղում կամ ուսումնասիրած լիներ քաղաքի գործերը և ունենար որոշ հայեացքներ գործավարութեան սկզբունքների մասին, կարողանար որոշ դիրք բռնել կնճռոտ խնդիրներում, երբ պէտք է այս կամ այն որոշմամբ հիմնական ուղղութիւն տալ քաղաքային ինքնավարութեան գործունէութեան։

Մենք կուսակից չենք այն կարծիքին, թէ ձայնաւոր լինելու համար պէտք է ունենալ բարձր դիրք հասարակութեան մէջ։ Ձայնաւորը նախ և առաջ պէտք է լուրջ և գործունեայ անձնաւորութիւն լինի, որ կարողանայ իսկապէս օգտաւէտ գործող լինել քաղաքային ինքնավարութեան մէջ։ Եւ եթէ նա իր այդ յատկութիւնների հետ կը միացնէ նաև որոշ ժողովրդականութեան այժը, դա կը լինի մի նպաստաւոր յաւելուած։ Իսկ դիրքով մարդիկ որոնելու ձգտումով անտես առնել օգտաւէտ գործողներին և դումայի լցնել այնպիսի պատկառելի անուններով, որոնք քաղաքի համար անընդունակ են գործել—դա խելացի վարմունք չէ։

Թող երիտասարդ, դեռ մեծ հռչակ և անուն չունեցող անձինք մուտք գործեն քաղաքային ինքնավարութեան մէջ, միայն թէ նրանք լինեն լուրջ և գործունեայ անձինք շարունակ գործելու որոշ ծրագրով, տոկուն և խելացի աշխատանքով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Թիֆլիսի արքունական թատրոնը այս տարի փակված է և այնտեղ օպերային ներկայացումներ տեղի չեն ունենայ։ Արքունական թատրոնը անցեալ տարի մեծ ծախսեր ունեցաւ եւ զգալի վնասներ, ուստի նա մի տարով դադարեցրել է իր գործունէութիւնը։

Սակայն օպերան դարձել է Թիֆլիսի հասարակութեան համար մի պահանջ, որը այժմ բաւարարութիւն է գտել ուրիշ ճանապարհով։ Իշխան Մերեթելի կազմել է օպերային մասնաւոր մի խումբ եւ իր սեփական միջոցներով ու իր պատասխանատուութեամբ տալիս է օպերային ներկայացումներ։ Նա վարձել է ձեռնտու դներով վրաց թատրոնական դահլիճը, պատրաստել է դեկորացիաներ, կազմակերպել խորերը եւ երաժշտութիւնը եւ ձեռնարկել գործի։

Մասնաւոր նախաձեռնութեան այդ արտայայտութիւնը շատ գովելի է։ Առանց նպաստի, առանց սուբսիդիայի օպերային թատրոնական գործ առաջ տանելը Թիֆլիսում մի նոր երեւոյթ է։ Եւ մենք շատ ուրախ կը լինենք, եթէ նա աջող արդիւնք ունենար եւ կարողանար նպաստել ինքնագործութեան գաղափարի պատուաստմանը մեր մէջ։ Սակայն պէտք է նկատել եւ այն, որ շնորհիւ թատրոնի հասոյթների փոքրութեան եւ մեծ ծախքերի՝ Մերեթելի նշանակել է չափազանց բարձր դներ տեղերի համար, որոնք մատչելի չեն ընդհանրութեան համար։

Օպերային առաջին ներկայացումը սկսվեց սեպտեմբերի 18-ին «Ֆաուստ» օպերայով։ Երաժշտութիւնը լաւ է, բեմը բաւական բարեկարգ է, թատրօնական դահլիճը նորոգված է եւ լաւ լուսաւորված։ Այն հասարակութեան համար, որ սովոր է արքունական թատրոնի լայն բեմին, ներկայ բեմը փոքր է երեւում. բայց այդ հանգամանքի հետ պէտք է հաշտվել։

«Ֆաուստի» ներկայացման մէջ առաւելապէս աչի ընկաւ երգչուհի Գաշինսկայեան։ Դա դեռ նոր սկսող մի երգչուհի է, որ ունի թէեւ փոքրիկ, բայց ախորժելի, լաւ մշակված ձայն։ Սկզբում նա շատ քաշվում էր եւ թոյլ տարաւ ճախարակ մանելու կարը, բայց յետոյ մնաց իր դերի մէջ եւ բացվեց հայելու տեսարանում եւ իր խաղով տպաւորութիւն գործեց երրորդ գործողութեան երկու տեսարաններում՝ տաճարի առաջ եւ մեռնող Վալենտինի մօտ։ Աջողութիւն ունեցաւ եւ երգչուհի Դոբրժանսկայեան Զիբելի դերում. նա ունի ուժեղ ձայն, աջող առոգանութիւն։ Երկու երգչուհիներն էլ ստացան փունջեր։

Երգիչները ընդհանրապէս չը գոհացրին հասարակութեանը։ Մէֆիստոֆելի դեր կատարող Զեմեզով վատ ձայն չունի. բայց նա Մէֆիստոֆելի համար անբաւարար է։ Նա չունի այդ դերի համար ոչ ձայնի թաւութիւն եւ ոչ խաղի լրջութիւն։ Ֆաուստի դեր կատարող երգիչ Լէնսկի երգում է քնքոյշ, կանոնաւոր, բայց տպաւորութիւն չէ գործում. երգիչը, իբրեւ դերասան, շատ անբաւարար է. նա միմիկա չունի։ Վալենտինի դերում Պոլուեանով գոհացուցիչ էր. նրա ձայնի վերին բեգիստրը անաջող է. բայց երգը ազդեցիկ է եւ խաղը աջող։ Մարթայի դերում խաղում էր Թիֆլիսի նախկին ծանօթ երգչուհի Բաուէր, որ այդ տեսակ դերերի մէջ վատ չէ։ Անկասկած առաջին ներկայացումով դեռ վերջնական գաղափար չէ կարելի կազմել երգիչների մասին։

Սիրող

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

Սեպտեմբերի 13-ին

Մեր Ասխաբադը եւ ընդհանրապէս անդրկասպեան երկիրը մեծ կարիք ունի թեմական առաջնորդի այցելութեանը, որովհետեւ կան այնպիսի կնճռոտ խնդիրներ, որոնք լուծում կը ստանան միայն Արիստակէս արքեպիսկոպոսի անձնական մանրաքննին քննութեամբ։

Մենք նրան սպասում էինք հէնց սեպտեմբերի սկզբներին, սակայն այժմ լրագրութեան մէջ լոյս տեսած տեղեկութիւններից իմանում ենք, որ նա ուշանալու է մի քանի ամիս եւ հետեւապէս թոյլ ենք տալիս մեզ մինչեւ անգամ ենթադրել, թէ սրբազանի գալը կարող է դեռ յետաձգվել անորոշ ժամանակով, որը ի հարկէ բոլորովին ցանկալի չէ մեզ։

Մեզանում կան ձգձգված կնճռոտ հարցեր, որոնք լուծում չեն ստացել չնորհիւ այն հանգամանքի, որ գործի իսկական դրութիւնը իր մանրամասն ճշտութեամբ երբէք չէ հասել թեմական առաջնորդի ականջին...

Կնճռոտ հարցերից մէկը մեր քահանայական հարցն է, որը ահա քանի տարի է լուծում չէ ստացել։ Սա թէեւ մի ընորոշ երեւոյթ է մեր հոգեւորականութեան մթնոլորտում, սակայն մենք համոզված ենք, որ Արիստակէս արքեպիսկոպոսի անաչառ եւ խստապահանջ քննութիւնը ամեն բան կը հարթէ, ճշմարտութիւնը կը վերականգնէ—մեղաւորը կը պատժվի եւ արդարը կը վարձատրվի—եւ տարիներով ժողովրդի մէջ խլրտում գցող հարցը միանգամից որոշ կերպարանք կստանայ։

Ասխաբադի հայ հասարակութիւնը (աւելի քան 400 տուն) ունի երկու քահանայ, որոնք բնաւորութեամբ երկու հակապատկերներ լինելով՝ մէկի չինածը միւսը անպայման ճգնում է քանդել, ոչնչացնել։ Օրինակ, անցեալ տարի քահանաներից մէկը հարց էր բարձրացրել ժողովրդի մէջ քահանաներին ռոճիկ սահմանելու մասին, որպէս զի միանգամից վերջ դրվի փարաջաղարների մուրացկանութեանը։ Սակայն միւսը, չը մոռանալով իր սկզբունքը—քանդել իր պաշտօնակցի չինածը—անմիջապէս վեր է կենում, ահագին ագիտացիա է անում ժողովրդի մեծագոյն մասի մէջ եւ ի հարկէ իր նպատակին հասնում։ Առհասարակ իւրաքանչիւր նոր բան մեր մէջ մեծ դժուարութեամբ է մտնում, եթէ ի հարկէ միահամուռ ոյժերով է ջանք գործ դնվում,—իսկ այստեղ դեռ դրա հակառակ միջոցն է գործադրվում, ուստի ժողովուրդը աւելի հակվել էր չը լինելու կողմը, քան լինելու եւ այս հարցում կենսիստորիայի առած հրահանգներն անգամ չիրագործվեցին, որովհետեւ մի քանի գործողների առաջը չինական պատեր էին քաշված... Մենք բողոքելուց յոգնել ենք, ուստի դրա դէմ բողոք կարծեմ չը յայտնվեց, թեմական առաջնորդին գործի մանրամասնութեան հետ ծանօթացնող չեղաւ, եւ շնորհիւ դրան՝ անտանձն անգամ չը սանձահարվեց։

Օրինակներ, փաստեր շատ կան, միայն խուսափում ենք այդ անելուց՝ ընթերցողին չը ձանձրացնելու նպատակով։ Մենք յուսով ենք, որ այս բոլորը կը հարթվի, կը կանոնաւորվի միայն թեմական առաջնորդի այցելութեամբ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԱՐՍԷՆ Վ. ԱՅՏԸՆԵԱՆ

(Անձնական յիշողութիւններ)

III

1892-ին Վիէննայում թատերական եւ երաժշտական ցուցահանդէս կար եւ Մխիթարեանները այդ միջազգային հանդէսում յատուկ հայկական բաժին էին սարքել, այն էլ երաժշտական, ուր փայլում էին գլխաւորաբար... Այտընեանի աշխատութիւնները։

Մեր մեծագոյն հայերէնագէտը ոչ միայն նշանաւոր լեզուագէտ էր. նա գիտէր հայերէնից զատ՝ հին եւ նոր յունարէն, լատիներէն, գերմաներէն, ֆրանսերէն, իտալերէն, անգլիերէն, թրքերէն եւ արաբերէն, բացի մի քանի այլ մեռեալ եւ կենդանի լեզուների մէջ ունեցած մասնական ծանօթութիւնից, ոչ միայն աջող նկարիչ էր, բնագէտ եւ հմուտ մանկավարժ, այլ եւ ծանօթ էր հիմնաւորապէս հայկական եկեղեցական երգեցողութեան եւ ձայնագրութեան եւ մասամբ եւրոպական երաժշտութեան։ Այդ ցուցահանդէսի ժամանակ ես Վիէննա էի։ Կամ առաւօտները իր աշխատութեան սենեակում եւ կամ սեղանից յետոյ, վանքի պարտէզի պավիլիոնում նստած, նա ինձ երկարօրէն բացատրում էր եւ առանձին յափշտակութեամբ՝ քանի որ յատկապէս սիրում էր գեղարուեստի այդ ճիւղը, հայկական եկեղեցական երգեցողութեան եղանակները, դարերի ընթացքում կրած փոփոխութիւնը, միւս արեւելեան՝ այն է յունական եւ սաւորական եղանակների հետ ունեցած առընչութիւնը, հայկական ձայնագրութեան առանձնայատկութիւնները, եւրոպական նօտաների վերածելու ժամանակ կրած դժուարութիւնները, զանազան տեղերի հայոց եկեղեցիների մէջ մեր նախնական եղանակների ընդունած այլայլումները, աղաւաղումները եւ այլ այնպիսի մանրամասնութիւններ, որոնք ցոյց են տալիս նրա խորին մասնագիտական հմտութիւնը այդ առարկայի մասին։

Առհասարակ Այտընեան խօսում էր այն ոյժով եւ վստահութեամբ, որ յատուկ է միայն արմատացած, հաստատ համոզմունք ունեցող մարդկանց։ Խօսելիս նա այնպիսի անկեղծութիւն եւ ոգեւորութիւն էր մտցնում իր բացատրութիւնների մէջ եւ այնպիսի սահուն եւ խօսակցական ոճ ունէր, որ նոյն իսկ առաջին անգամ նրա հետ տեսնվողը մի տեսակ յափշտակութիւն էր զգում դէպի նրա անձնաւորութիւնը եւ հեռանում էր թէ մտքով եւ թէ սրտով բաւականացած։ Նրա այս յատկութիւնն էր՝ միացրած նրա ուսումնականի համբաւին, որ յարգողների այնքան ընդարձակ շրջան էր ստեղծել նրա շուրջը, ոչ միայն հայոց, այլ եւ օտարազգիների մէջ, մանաւանդ իր մշտական բնակութեան վայրում—Վիէննայում։

Ցուցահանդէսում հայկական բաժինը ամփոփված էր հայերէն վերնագրով մի մեծ եւ գեղեցիկ յօրինված պահարանում, որի մէջ Մխիթարեանները ցոյց էին դրել ինչ որ ունէին իրանց թանգարանում, մատենադարանում կամ իրանց տրամադրութեան տակ այդ ճիւղի մասին։—Ամենից ուշագրաւը՝ Այտընեանի ձեռագիր աշխատութիւններն էին—հայկական եկեղեցական երգեր (պատարագի, շարական եւ այլն) հայկական խազերով ձայնագրված եւ եւրոպական՝ ըստ կարելոյն համապատասխան նօտաներով բացատրված, տեղ-տեղ գերմաներէն բացատրութիւններով եւ հայերէն խօսքերը լատիներէն տառերով գրված, օտարներին մատչելի լինելու համար։ Շնորհիւ իր այս ինքնուրոյն նկարագրին, այս բաժինը ուշադրութիւն էր գրաւում այցելուների, յատկապէս մասնագէտների կողմից թէ Վիէննայի, ուր այնքան տարածված է երաժշտութիւնը, եւ թէ եւրոպական զանազան երկիրներից՝ մանաւանդ Գերմանիայից եկած, որոնք երկարօրէն կանգ էին առնում այս՝ իրանց համար կատարեալապէս անծանօթ եւ նոր՝ արեւելեան ձայնագրված երգերի եւ նրանց մեկնութեան առաջ։ Այնու ամենայնիւ հայկական բաժինը՝ ինչպէս Այտընեան ինքն էլ ցաւելով ասում էր, ցանկացված կատարելութիւնը չունէր։ Նոյն նիւթի վրա կային դեռ ուրիշ աշխատութիւններ, որոնք դուրս էին մնացել, որովհետեւ Վիէննայի Մխիթարեանները չէին կարողացել ձեռք բերել։ Նրանք առհասարակ շատ սուղ միջոցների տէր են եւ հնարաւորութիւն չունէին ամեն ինչ փողով ձեռք բերելու։ Պակասած աշխատութիւնների շարքումն էին մանաւանդ Էջմիածնի հրատարակութիւնները։ Այտընեան ինձ յայտնեց, թէ Էջմիածնի որ հրատարակութիւններն էին պակաս եւ ես խոստացայ այդ մասին հոգալ։ Կովկաս վերադարձիս, ես անմիջապէս գրեցի Սեդրակեան սրբազանին Էջմիածին եւ բացատրեցի գործի հանգամանքը։ Արիստակէս սրբազան յօժարակամ կարգադրեց հարկ եղածը, եւ նոյն տարին իսկ Էջմիածնից ուղարկվեցին Վիէննա այն բոլոր հրատարակութիւնները հայկական եկեղեցական երգերի մասին, որ տպված էին Էջմիածնում եւ պակասում էին Վիէննայի վանքին։ Այս նուէրը՝ ինչպէս գրում էր ինձ Այտընեան, մեծ ուրախութիւն էր պատճառել նրան եւ նա առանձին նամակով ես իր շնորհապարտ զգացմունքը յայտնեց Սեդրակեան սրբազանին։

1895-ը Այտընեանի ապօթէօզի տարին էր։ 1886-ին նա ընտրվել էր Մխիթարեան ընդհանրական Աբբայ, եւ հետեւեալ տարին նա օծվել էր եպիսկոպոս եւ ստացել արքութիւն։ Մինչեւ իր ժամանակ Մխիթարեան աբբահայ-

որին եւ անհամբեր սպասում ենք մենք։

Ի դէպ, մենք չունենք հոգեւորական գործակալ. մեր գործակալը այժմ երէցփոխն է, բայց աշխարհական գործակալը, համաձայն եկեղեցական կանոնների՝ իրաւունք չունի անձամբ թոյլատրութիւն տալու պսակադրութիւնների համար, ուստի պսակվողները ստիպված են սպասել շաբաթներ, որպէս զի կոնսիստորիան ինքը թոյլատրութիւն ուղարկէ։ Բայց չէ՞ որ դա մեծ դժուարութիւն է ներկայացնում մանաւանդ եկւոր ամուսնացողների համար։

Սուրխաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 19-ին

Ստիպված եմ խնդրել խմբագրութեանդ, որ ի սէր արդարութեան տպագրէք այս նամակը, որով եւ հրապարակ կը հանվի մեր մի կարգի ընթերցողների վարմունքը եւ կը վերականգնվի ճշմարտութիւնը։

«Մշակի» 202 համարում նամակագիր «Դիտողը», ուժգին կերպով դատափետելով Թիֆլիսի մեր կրօնուսոյց հայրերից մի քանիսի ապիկար ծառայութիւնը, մեծ իրարանցումն է ձգել նրանց մէջ։ Այո, ժողովրդական առածը վաղուց է բնորոշել այն իմաստը թէ՝ «արջն իր ահիցը կը գոռայ»։ Այդ իմաստին մօտ է նաեւ մեր կրօնուսոյց հայրերից շատերի այսօրվայ վրդովմունքն ու գայրոյթը։ Նրանց արտին, մեր կարծիքով, «Դիտողը» «դամղ է դրել եւ դիւգունէ» զարկել։ Նրանք փոխանակ մարդավարի կերպով հերքելու «Դիտող»-ի դրածը եւ կամ ճիգ անելու ուղղել իրանց ընթացքը, հեւասխուզելով փնտռում են գրողին, որ խաչ բարձրացնեն։ Սրանցից մէկն իր ջղբրվելու մէջ այնքան գրգռվել է, որ մինչեւ անգամ ասել է, որ եթէ գտնէ գրողին, թոյն կը խմացնէ նրան։

Բայց որովհետեւ այդ վաղուց երդվեալ իմ թշնամի հայրերը դարձեալ կանգ են առել ինձ վրա, թէ ես եմ «Դիտող»-ը, սրանով պարտք եմ համարում հրապարակով յայտնել, որ չեղալ նամակը իմը չէ, ուրեմն նրանք, այդ արժանապատիւ հայրերը, զրպարտում են ինձ իրանց վաղեմի եւ անթառամ սովորութեան համաձայն։

Բայց կցում եմ սրան նաեւ հետեւեալը։— Արժանապատիւ հայրեր, միթէ դուք կարծում էք, որ «Դիտողի» նամակն իր տեսակի մէջ առաջինն է. այդ դէպքում ես ձեզ հարիւրաւոր չը հերքված նամակներ եւ լուրեր ցոյց կը տամ մեր մամուլի մէջ, որոնցով անդադար ցաւակցութիւն են յայտնում մեր կրօնուսոյցների, կրօնի դասաւանդման եղանակի եւ դրութեան մասին. միթէ կարծում էք նոր բան է. նոր չէ, սխալվում էք. սա հին ցաւ է. մեր մատաղ սերնդի կրօնի եւ դաստիարակութեան գործը, մանաւանդ Թիֆլիսում, թշուառ դրութեան մէջ է։ Ասածներիս իբրեւ չչափելի փաստ առաջ եմ բերում այն, որ Նորին Օծութիւնը սրանից երկու տարի առաջ Թիֆլիսում առաջնորդարան կանչեց մեր կրօնուսոյցներից ոմանց, յանդիմանեց նրանց ապիկարութիւնը եւ պատուիրեց, որ ուղղեն իրանց, իսկ անցեալ տարի Նորին Օծութիւնը, դարձեալ կանչելով բոլորին, յիշեցրեց իր պատուէրը, աւելացնելով, որ կրօնուսոյցների մասին իրան շատ գանգատներ են հասնում։

Յարութիւն քահանայ Ճուղուրեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 17-ին

«Մշակ»-ի № 185-ում տպված մեր յօդուածը լրացնում ենք հետեւեալ տեղեկութիւններով։

1) Նուիրատուութիւնը եղել է 1899—1900 թատրոնական սէզոնին։

2) Հակառակ մեր ամենամեծ ցանկութեան՝ անունները տալ անկարող ենք մեզնից անկախ պատճառներով։

3) Սէկցիայի դրամարկղը այդ գումարը չէ մտել, որը նաեւ հասկանալի է «Մշակ»-ի № 201-ի մէջ տպված մեր նամակից, բայց սէկցիայի անդամները իմանալով իրողութիւնը՝ փոխանակ աշխատելու, որ այդպիսին նպատակին ծառայէ՝ բաւականացել են, հակառակ նուիրողի արդելքին, միմիայն ասէկօսէներ տարածելով։

4) Պ. Ն. Աբրահամեանի տարածած եւ մեզ անձամբ հաղորդած «ասէկօսէները» առաջին աղբիւրից ծագելով՝ ստիպված եղանք հրապարակով արձանագրել մէջի եղած ճշտութիւնները՝ որը պարոնը քաջութիւն չէ ունեցել հրապարակ հանելու, այլ տարածել է անկիւններում։

Սրանով մենք դնում ենք վերջակէտ այս հարցի առիթով։

Անյուշ

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, սեպտեմբերի 22-ին, տեղի կունենան Թիֆլիսի առաջին ընտրողական շրջանի ընտրութիւնները քաղաքային դումայի համար նոր ձայնաւորներ ընտրելու նպատակով։ Ընտրութիւններին կը մասնակցեն 1, 2, 3 եւ 4 ոստիկանական մասերի ընտրողները։ Քաղաքային ուպրավան որոշել է այդ ընտրութիւնները կատարել Թիֆլիսի ժողովարանի ամարային բնակարանում։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ խուլ եւ համրերի կովկասեան հոգաբարձութիւնը որոշել է բանալ երիտասարդ աշակերտների ուսումնարան առաջիկայ հոկտեմբեր ամսի 20-ից։ Աշակերտները դպրոցում կը ստանան նախաճաշ հոգաբարձութեան հաշուով։ Ուսումնարանի համար հրաւիրված է նոր ուսուցիչ Բառուդ, որ քաջ ծանօթ է խուլ եւ համր երեխաներին ուսուցանելու եղանակին։ Մօտ ապագայում կը բացվի եւ ուսումնարան—ապաստարան։

—

Մօտ օրերումս Թիֆլիս հասաւ ֆինանսների մինիստրութեան խորհրդի անդամ եւ մինիստրութեան արդիւնագործական ուսումնարանների կառավարիչ Անօսով, որ այցելեց Թիֆլիսի առեւտրական ուսումնարանը եւ ներկայ եղաւ մի քանի դասերի։

—

«Մշակի» 202, 206 եւ ներկայ 207 համարներում տպվեցին խմբագրութեան ուղղած նամակներ հայ կրօնուսոյցների վերաբերութեամբ։ Տպագրելով այդ նամակները՝ խմբագրութիւնը թողնում է նրանց մէջ յայտնած տարբեր եւ հակառակ կարծիքների ապացուցելու ծանրութիւնը եւ պատասխանատուութիւնը հեղինակների վրա։ Ներկայ դէպքում խմբագրութիւնը ցանկացել է կարողութիւն տալ անաչառ եւ բազմակողմանի կերպով լուսաբանելու հարցը։

—

«Торгово-Промышленная Газета» լրագիրը, խօսելով այս տարվայ ցորենի համաշխարհային հունձի մասին, գալիս է հետեւեալ եզրակացութեան. «Այս տարվայ հունձը ընդհանրապէս ազդող հետեւանքներ ունեցաւ քանակութեան կողմից, բայց կատարելապէս բաւարար չէր սերմի որակութեան կողմից, որը վնասվեց գլխաւորապէս Եւրոպայի ցամաքի այն պետութիւնների մէջ, որոնք կարօտ են ցորենի ներմուծման, եւ Ամերիկայի Միացեալ-Նահանգներում։ Այս հանգամանքը հիմք է տալիս յուսալու, որ Եւրոպայի՝ ցորեն արտահանող պետութիւնները եւ մանաւանդ Ռուսաստանը արդիւնաւէտ կերպով կը վաճառեն իրանց բերքը գոնէ այս տարվայ առաջին կիսում, որի ընթացքում միջազգային վաճառականը չափազանց մեծ կարիք կունենայ ցորենի, որովհետեւ հին պաշարները արդէն վերջացած են։ Տարվայ երկրորդ կիսում սպասելի է, որ մեծ ազդեցութիւն կունենայ ցորենի համաշխարհային վաճառման վիճակի վրա Արգենտինան, որտեղ այդ ժամանակ կը պարզվեն ցորենի հետեւեալ հունձի հետեւանքները։

—

Առաջիկայ յունվար ամսին Պետերբուրգում տեղի կունենայ անասնաբոյծների համառուսական առաջին համաժողովը՝ պատուաւոր նախագահութեամբ Մեծ-Իշխան Դմիտրի Կոնստանտինովիչի։ Համաժողովը բաղկացած կը լինի 16 ստորաբաժանմունքներից, որոնց կառավարելու համար հրաւիրված են անասնաբուժական ինստիտուտների պրոֆէսորները։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 15-ին վախճանվեց Կարսում բաւական հարուստ համարված Մահտեսի-Յարութիւն աղայ Միչեանցը։ Հանգուցեալը իր ունեցած կարողութիւնը բարեխղճաբար բաժանելով իր ժառանգներին, մի եւ նոյն ժամանակ տեղիս նորակառոյց եկեղեցու շինութեան համար 'կտակեց չորս հարիւր ռուբլի, մեր գաղթական եղբայրներին յիսուն ռուբլի, Թիֆլիսում գոյութիւն ունեցող կոյրերի ուսումնարանին հարիւր ռուբլի, Կարսի աղքատների խնամակալութեան յիսուն ռուբլի, Էջմիածնին յիսուն ռուբլի եւ Կարսի գրագարանին յիսուն ռուբլի։ Հանգուցեալի կտակած այս գումարները շուտով կը տրվեն մեր այստեղի յաջորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանցին, որ նա տեղ հասցնէ»։

—

ԼԱԳՕԴԵԽԻՑ մեզ գրում են. «Մօտերքս ազգակային մի խումբ շրջում է աւանիս անտառում եւ պատահած մարդկանց թէեւ չէ սպանում, բայց ունեցածը սպառնալիքով խլում եւ դատարկ ճանապարհ է ձգում»։

—

ԼԱԳՕԴԵԽԻՑ մեզ գրում են. «Ինն տարի է ինչ գոյութիւն ունի մեզանում արքունական դպրոց, ուր սովորում են եւ հայ երեխաներ՝ 25-ի չափ, որոնք մինչեւ օրս զրկված են եղել կրօնի եւ մայրենի լեզուի ուսուցումից։ Ներկայ ծխատէր Բագրատ քահ. Սուքիասեանցի եռանդուն ջանքերի շնորհիւ այս ուսումնական տարվանից դպրոցների պ. վերատեսուչը հաստատել է տէր հօրը որպէս կրօնուսոյց։ Հաւանալի է, որ մեր վրացախօս երեխաները կը սովորեն այսուհետեւ կրօն»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 15-ից հետեւեալը. «Այսօր ութերորդ օրն է, որ անդադար չարունակ անձրեւներ են տեղի ունենում Ղուբայում եւ նրա շրջակայքում։ Ճանապարհները դէպի Խաչմազ—երկաթուղու կայարանը անանցանելի են դարձել։ Թանձր կուտակված ցեխերի պատճառով 5—6 ժամում պօստի սայլով չեն կարողանում անցնել ընդամենը 28½ վերստ տեղ։ Ճարահատեալ ուղացած գիմնազիստները գնում են Բագու Դիվիչու վրայով, որը երկու անգամ աւելի հեռու է քան Խաչմազ։ Բայց ինչ անես, որ ճանապարհը դէպի Դիվիչի աւելի լաւ է, խճուղի լինելու պատճառով։ Շատ այգեպաններ դեռ խնձորաքաղը չեն սկսել անձրեւի պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Շեյխ-իլ-Իսլամի «Գրամէթը աաքէրիյէ» դատարանին առջեւ այս միջոցին շատ հետաքրքրական դատավարութիւն մը տեղի կունենայ, որուն ներկայ կը գտնուին բազմաթիւ ունկընդիրներ։ Գործը բոլորովին անօրինակ բան մը չէ, սակայն խնդրոյն մէջ այնպիսի մանուածապատ պարագաներ կան, որոնք իրաւամբ հետաքրքրութիւն եւ զարմանք կը շարժեն։ Խնդրոյն ամփոփումը այս է.—Բնիկ Կիւմիւշխանեցի եւ ապա ընտանեօք Բաբերդ հաստատուած Մրտիկեան Ստեփան, Պաղտասար եւ Խաչատուր, հայրենական մնացորդ դրամագլխով 20—25 տարի առաջ Բաբերդի մէջ մանուֆաթուրայի գործ մը կը հաստատեն, եւ հետզհետէ գործը ընդարձակելով, Պոլիս ալ մասնաճիւղ մը կը բանան։ Մէկ քանի տարի առաջ ասոնցմէ Խաչատուր կը մեռնի՝ թողլով այրի մը եւ 3 զաւակ, որոնք յետոյ կուգան Պոլիս հաստատուիլ։ Ժամանակ անցնելէ յետոյ, հանգուցեալ Խաչատուրին կինը, կասկածելով իր տագրերուն գործառնութեանց վրա, կուզէ իր որբերուն իրաւունքը հաստատել. սակայն պատասխան կը ստանայ թէ իր ամուսնոյն ունեցած բաժինը կորսուած է, եւ թէ ինք իրաւունք մը չունի, եւ եթէ դարձեալ յամառելով պնդէ՝ կը արտաքսեն զինքը տունէն։ Այս սպառնալիքներուն տակ մէկ կողմէն խեղճ այրին կը յայտարարէ թէ իր ամուսինը ո եւ է իրաւունք չունի, եւ միւս կողմէ Մրտիկեան եղբայրները կաշխատին օրինական թուղթ մը ձեռք ձգելու եւ ինքնինքին տէր ցուցնելու նոյն առեւտրական տան, իրենց եղբօրը այրին ալ զաւակներուն վասի կարգելով։ Սակայն Շեյխ-իլ-Իսլամի դուռը տեղեկանալով այս խաղին, որբերու իրաւունքը պաշտպանելու համար Մրտիկեաններու քրոջմէն տիկին Էլմասէ կը ստուգէ գործին բոլոր պարագաները, եւ հրաւիրելով թէ Մրտիկեան եղբայրները եւ թէ Խաչատուրի որբերուն վասի եղող այրին, երբ կը հասկցուի թէ գիտնալով իրողութիւնը ծածկած էր, կը հրաժարեցնէ

ութիւնը եպիսկոպոսութեան օծումն ընդունում էին լատին բարձրագոյն հոգեւորականութիւնից, հայածէս հայրապետի պակասութեան կամ հեռաւորութեան պատճառով։ 1887-ին Թիւրքիայի հայ-կաթոլիկների կաթողիկոսը եւ պատրիարքը՝ Ազարեան եկել էր Հռոմ, եւ որովհետեւ Այտընեան ցանկանում էր հայկական ծէսով օծվել, ուստի Ազարեան՝ ընդունելով Միաբանութեան հրաւէրը, մանաւանդ որ ինքն էլ առանձնապէս յարգում էր Նորընտիր աբբահօրը, Հռոմից դիմեց ուղղակի Վիէննա։

Աւստրիայի մայրաքաղաքը առաջին անգամ էր տեսնում չքեղ հայկական եկեղեցական հանդէս. Այտընեանին իրանց անձնական յարգանքը ցոյց տալու համար՝ նրա օծմանը հաւաքվել էր ահագին բազմութիւն Վիէննայի եկեղեցական, պետական, քաղաքային եւ դիպլոմատիական շրջաններից։—Շատ հաճելի տպաւորութիւն էր թողել բոլորի վրա թէ հայկական ծիսակատարութիւնը եւ թէ հայկական պատարագի երգեցողութիւնը, եւրոպական եղանակաւորումով եւ օրկեստրի ընկերութեամբ, որը՝ ինչպէս վերը յիշեցի, Այտընեանի աշխատութեան արդիւնքն էր։—Արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրանալուց յետոյ՝ Այտընեան աւելի եւս ընդարձակեց իր ծանօթութեան շրջանը։ Այն անօրինակ մեծ դիւրութիւնը, որով նա խօսում էր եւրոպական բոլոր գլխաւոր լեզուները, մտերմացրել էր նրան եւրոպական զանազան ազգութիւններին պատկանող ուսումնական եւ քաղաքական անձնաւորութիւնների հետ։ Նա ծանօթ դէմք էր դարձել Վիէննայում, մանաւանդ որ բնաւորութեամբ էլ շատ մարդամօտ, վերին աստիճանի քաղաքավար, փափկանկատ էր եւ միանգամայն պարզ։ Մեծ յարգանք էր տածում դէպի նրա անձնաւորութիւնը՝ նաեւ Աւստրիայի կայսրը։

1895-ին լրանում էր Այտընեանի քահանայութեան եւ գրական գործունէութեան յիսնամեակը։ Միաբանութիւնը եւ նրա բազմաթիւ յարգողները մեծ պատրաստութիւններ էին տեսել այդ օրը չքեղ կերպով տօնելու։ Այս տօնախմբութիւնը, որ կատարվեց նոյեմբերի 3-ին (հոկտ. 22) նրանով եւս նշանաւոր եղաւ, որ յօբելեարի անձնաւորութիւնը գրաւել էր անթիւ շնորհաւորողներ ոչ միայն հայերից—առանց կրօնի եւ կուսակցութեան զանազանութեան—այլ եւ մի մեծ խումբ օտարազգիներից, որոնց մէջ կային ամենաբարձր անձերից սկսած (Պապը, կայսրը, մինիստրներ, Վիէննայի քաղաքագլուխը, դեսպաններ եւ այլն) մինչեւ ամենահասարակ ժողովուրդը, մանաւանդ այն գերմանացի եւ այլազգի կաթոլիկները, որոնք յաճախում էին Միխիթարեանների եկեղեցին եւ իրանց չը հասկացած լեզուով—հայերէն—կատարվող պատարագ էին տեսնում ջերմեռանդութեամբ։ Յօբելեանը՝ շնորհիւ այդ պարագայի՝ միջազգային բնաւորութիւն էր կրում, որ հազուագիւտ երեւոյթ է հայերի մէջ։—Այդ առիթով Հռօմի Պապը՝ իբրեւ նշան առանձին համակրանքի՝ յանձնարարել էր իր Վիէննայի նունցիային՝ նրա կողմից շնորհաւորել անձամբ եւ նունցիան եկել էր պաշտօնական ձեւով, իր ամիտայով եւ յօբելեանի սեղանի վրա առաջին բաժակն առաջարկելով յայտնեց, որ կաթոլիկ եկեղեցու պետը՝ նշանակում էր Այտընեանին իրան Առընթերակաց, Թագադիր եւ շնորհում էր նրան կոմսի տիտղոս։ (Հռօմի կոմսութիւնը երբ շնորհվում է հոգեւորականի, այդ լինում է միայն բարձրաստիճան եւ բազմարդիւն թեմական եպիսկոպոսներին։ Լեւոն XIII բացառութիւն էր արել այս կանոնից—յատկապէս Այտընեանի համար)։ Ֆրանց Եօզէֆ կայսրի կողմից եկել էր Սաքրին Աւստրիոյ կառավարիչ կոմս Կիլմանսէգ (որի կինը լեհացի հայուհի է)։ Աւստրիական կայսրը շնորհել էր Այտընեանին մի բարձր շքանշան—Ֆրանց Եօզէֆ կարգի «Մեծ Խաչը եւ Աստղը»։ Կայսրը, դրանով չը բաւականանալով, մի քանի օր յետոյ յատկապէս հրաւիրել էր յօբելեարին պալատ՝ ճաշի եւ անձամբ էլ յայտնել իր խընդակցութիւնն ու համակրանքը։—Այտընեան բազմաթիւ նուէրներ եւս ստացաւ այդ օրը զանազան տեղերից, ի միջի այլոց՝ Վիէննայի հայերը մատուցին նրա արձանը՝ արոյրից չինված եւ բնական մեծութեամբ։

Այդ միջոցին, հոկտեմբեր ամսին, ես ճանապարհորդում էի Ռումինիայում եւ Բուլգարիայում մասնաւոր գործերով եւ որոշել էի յօբելեանին գտնվել Վիէննայում, որ կարողանայի շնորհաւորել թէ անձնականապէս եւ թէ իբրեւ ներկայացուցիչ, «Մշակի» խմբագրութեան յանձնարարութեամբ։ Բայց դժբաղդաբար մի անակնկալ դէպք արգելք եղաւ իմ այդ բաղձանքին եւ ես ստիպված էի Դունայի ռումինական ափերից հեռագրով յայտնել իմ սրտաբուղխ շնորհաւորութիւնները։

Յօբելեանի առիթով այսպէս՝ ամեն կողմից եղած բազմաթիւ եւ բազմատեսակ յարգանքի եւ համակրանքի ցոյցերից խորապէս զգածվել էր Այտընեան, որ ինչ դիրք եւ աստիճան էլ որ ընդունէր, մնում էր միշտ նոյն խոնարհամիտ հաստատ վանականը։—Թիֆլիս վերադարձիս գտայ նրա մի նամակը, որի մէջ գրում էր. «...Հեռաւոր եւ մերձաւոր բազմաթիւ սրբոտերու, մտքերու եւ ձեռներու ողջոյններն, կատարած ցոյցերը՝ նաեւ ծայրայեղ չափազանցութեամբ, զիս ամօթապարտ են արած... Այժմ կենացս երեկոյին՝ անմոռաց էր երեխոտագէտ մտացս՝ նոյեմբ. 3 օրը, եւ օրվան գեղեցիկ յիշատակներու շարքին մէջ յանկարծ աչացս հանված... հաճոյագոյն նուէրը...» վերջին խօսքը իմ մատուցած մի աննշան ընծայի մասին է)։

Սարուխան

զինքը վախուԹենէ եւ տիկին Էլմասը վասի կը կարդէ։ Ահաւասիկ այս տիկին Էլմասն է, որ իր մեռած եղբօրը որբերուն իրաւունքը կը պաշտպանէ այսօր «Գրամէթը առքէրիյէ» դատարանին առջեւ, առանց փոխանորդի անձամբ ներկայանալով եւ դատավարելով իր երկու եղբայրներուն դէմ. անոնց ամեն առարկուԹեան կը պատասխանէ եւ կը հաստատէ Թէ Խաչատուր Մրիկեան ալ իրեն միւս երկու եղբայրներուն պէս չահակից էր գործին մէջ, եւ Թէ անոր իրաւունքը պէտք է որոշուի եւ իր զաւակներուն յատկացուի։ Դատարանը իր վերջին դատավարուԹեան մէջ որոշեր է քննել տալ այս առեւտրական տան բոլոր ԹուղԹերը եւ տետրակները, որպէս զի ճշդուի Թէ իրենց մեռնող եղբայրը ինչ մասնակցուԹիւն ունէր նոյն առեւտրական տան մէջ։ Այս քննուԹենէն յետոյ դատարանը իր վճիռը պիտի արձակէ։

Պատրիարքարանի դիւաններու տեսուչները, որոնց մէջն է հարկաւ եւմէնց տեսուչնալ, այս առաւօտ կը գումարուին պատրիարքարանի մէջ զբաղելու պատրիարքարանի պիւտճէի խնդրովը։ Կը կարծենք Թէ ասիկայ անպայմանօրէն խորհրդակցուԹիւն մը պիտի ըլլայ, որովհետեւ օրինական ոչ մէկ տրամադրուԹիւն կայ որ պաշտօնէուԹիւնը պիւտճէի գործով պարապի. կերեւայ որ քաղաքական ժողով եւ անտեսական խորհուրդ բաւական չեղան կնճիռները հարթելու, եւ անոնց ընել չկրցածն է որ տեսուչները պիտի ընեն։ Տարակոյս չը կայ Թէ պատրիարքարանի տեսուչներուն մէջ կան այնպիսի անձեր, որոնք ազգային պաշտօնէուԹեան մէջ քար կը հանեն քաղաքական ժողովոյ ամենէն փոքր անդամին. սակայն Թող ներուի որ ըսենք Թէ անոնք դրամական գործերէ, պիւտճէէ այնքան կը հասկնան, որքան կը հասկնանք մենք... Երուսաղէմի հաշուական գործերէն։ Ոչ պիւտճէով կը հետաքրքրուին եւ ոչ ալ դրամական գործերով կը զբաղին. եԹէ ամսական գտնեն կառնեն, եԹէ չը գտնեն՝ զեղջել կուտան կառնեն. կը բաւէ որ պէտքերնին լրացնեն. այս է ահաւասիկ վիճակը։ Այս նոր յանձնաժողովն ալ մէկ նոր ձեւն է ժամանակին կազմուած ելմական յանձնաժողովին, որուն կազմուԹեան առաջին օրը գրեցինք Թէ որ եւ է արդիւնք չը պիտի կրնայ ունենալ եւ յետոյ կէտ առ կէտ հաստատուեցաւ ինչ որ ըսինք։ Այժմ դարձեալ կը կրկնենք, աւելորդ է անուններու եւ ձեւերու այս փոփոխուԹիւնը։ Պատրիարքարանի պիւտճէն հաւասարակշռելու միակ միջոցն է ամսականները եւ ծախքերը ջնջել. հասոյթ աւելցնելու միջոց չը կայ, պարապ աշխատուԹիւն է եղածը, եւ եԹէ այսպէս երԹայ, այս տարի կամ գալ տարի նոր յանձնաժողով մը պիտի կազմուի պիւտճէի բացէն յառաջ եկած պարտքը գոցելու միջոցներ գտնելու համար։

ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ, ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

I

Ռուսաց մամուլը, եւ գլխաւորապէս «Новое Время» լրագիրը, վերջին օրերս սկսել են լուրջ կերպով զբաղիլ Բաղդադի երկաԹուղու չինուԹեան հարցով, մի եւ նոյն ժամանակ բացատրել, Թէ Ռուսաստանը ինչ դեր պէտք է կատարէ Փոքր-Ասիայում, ինչ դեր է կատարել մինչեւ այժմ եւ ինչ դեր պէտք է կատարէ այսուհետեւ։

Յայտնի է, որ Բաղդադի երկաԹուղու չինուԹիւնը, կատարվելով գերմանացիների ձեռքով, որոնց օգնում են նաեւ ֆրանսիացիները, զգալի հարուած պէտք է հասցնէ Ռուսաստանի կենսական եւ քաղաքական շահերին, որովհետեւ այդ երկաԹուղու գիծը, որ պէտք է ունենայ 2000 վերստ տարածուԹիւն, անցնելով Փոքր-Ասիայի կայ եւոր եւ հայաբնակ նահանգներով, եւ տարածվելով մինչեւ Պարսից ծոցը, պէտք է ենԹարկէ ամբողջ Փոքր-Ասիան Գերմանիայի քաղաքական, տնտեսական եւ կուլտուրական ազդեցուԹեան, ուրեմն պէտք է փակէ ռուսների առաջ ճանապարհը այնտեղ, ուր նրանք ձգտում էին ամբողջ դարերով, ուր նրանք տեսնում էին իրանց պատմական միասիայի, կոչման իրականացումը։ Մինչեւ այժմ յոյս կար, Թէ այդ մեծ ձեռնարկուԹիւնը, որ գերմանացիների ձեռքն է գցում ամբողջ ասիական Թիւրքիան եւ Մօտաւոր Արեւելքի տէրն է դարձնում նրանց, չի իրականանայ, որովհետեւ շինուԹիւնը չէ սկսված, որովհետեւ Թիւրքիան ֆինանսական միջոցներ չունի, որ վճարէ իր քիլօմէտրական ապահովուԹիւնը, իսկ առանց այդ ապահովուԹեան ոչ ոք չի սկսի շինուԹիւնը։ Սակայն այդ ենԹադրուԹիւնը սխալ դուրս եկաւ։ «Новое Врдмя» լրագիրը բոլորովին արժանահաւատ աղբիւրից տեղեկուԹիւն է ստացել, որ գերմանացիները արդէն սկսել են երկաԹուղու շինուԹիւնը 250 վերստ տարածուԹեան վրա, սկսած Կոնիայից մինչեւ Բուլղար-Մաղան, որ Մերսին քաղաքից 55 վերստ հեռու մի աւան է։

Ուրեմն գերմանացիները չը ստանալով նոյն իսկ քիլօմէտրական ապահովուԹիւն, ձեռնարկել են արդէն շինուԹեան, եւ միամտուԹիւն էր կարծել, ինչպէս շատ ճիշդ նկատում է ռուսաց ԹերԹը, որ նրանք կը յեսուաձգեն այնպիսի մի ահռելի շահաւէտ գործ, որովհետեւ Բաղդադի երկաԹուղու շինուԹեան ծրագրի իրագործումը հայրենասիրական մի գործ է հանդիսանում գերմանացիների համար եւ ահռելի օգուտներ է խոստանում նրանց ապագայում քաղաքական եւ տնտեսական տեսակէտից։ Արդիւնաբերական ճգնաժամը Գերմանիայում դեռ շարունակվում է, նրան վերջ դնելու համար անհրաժեշտ է բաց անել նոր վաճառանոցներ։ Բաղդադի երկաԹուղին կը բանայ Գերմանիայի համար այդ վաճառանոցները եւ փոխարէնը կը տայ էժան հացահատիկներ։ Թիւրքիան նոյն ահռելի օգուտներ կստանայ այդ ծրագրի իրագործմամբ եւ Բաղդադի երկաԹուղու շինուԹիւնը վաղուց օսմանեան կառավարուԹեան ջերմ փափագն է կազմում, որովհետեւ այդ երկաԹուղին կը զարգացնէ երկրի տնտեսական վիճակը։

Այդպիսի հանգամանքներում Գերմանիան դրամական միջոցներ կը գտնի գործը գլուխ բերելու։ Ֆրանսիան մեծ պատրաստականուԹիւն է յայտնում դրամական միջոցների մեծ մասը հայԹայԹել, անտես առնելով այդ հարցում իր դաշնակցի շահերը։

«Ոչ—ասում է «Новое Время» լրագիրը—ջայլամի քաղաքականուԹիւնը պէտք է դէն ձգվի։ ՄխիԹարել մեզ այն մաքով, Թէ ամեն բան աշխարհումս լաւ է գնում եւ անհաճելին չը պէտք է տեղի ունենայ միայն այն պատճառով, որ նա մեզ անհաճելի է, ոչ միշտ օգտակար է լինում։ Երբ վտանգը մեծ է, նրան պէտք է ուղղակի աչքերի մէջ նայել, իսկ Թէ Բաղդադի երկաԹուղու շինուԹիւնը անկասկած մեծ վտանգ է հանդիսանում, այդ մասին ոչ ոք չէ կարող վիճել։ Աւելի լաւ է մտածենք, Թէ ինչ անենք։ Ի՞նչ պէտք է ձեռնարկենք լսելով ռուսական ինքնագիտակցուԹեան համար այս ծանր լուրը. Բաղդադի երկաԹուղին արդէն շինվում է»։

Եւ լրագիրը ցոյց է տալիս, Թէ ինչ պէտք է անել, ինչպէս կը տեսնենք յաջորդ անգամ։

Հ. Ա.

ՎՐՏԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայի «Suformation» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքաց նախկին մեծ վիզիր Խալիլ-Ռիֆատ փաշայի երկրորդ որդին նորերս յանկարծ Թողեց Կ. Պոլիսը եւ փախաւ Եւրոպա։ Այդ անակնկալ փախուստը տեղացին իրարանցումն առաջ բերեց Իլդիզ-Քիոսկում։ ՍուլԹանը ամեն կերպ աշխատեց, որ համաձայնեցնէ Ռիֆատին վերադառնալ, բայց անօգուտ. Ահմէտ-Ռիֆատ բէյ Վիէննայից գնաց Լօնդոն եւ միացաւ երիտասարդ Թիւրք կուսակցուԹեան հետ։ Նա այժմ աշխատում է կազմակերպել երիտասարդ Թիւրքերից մի այնպիսի ընդդիմադրական կուսակցուԹիւն, որի անդամներին սուլԹանը չը կարողանայ կաշառել. այդ կուսակցուԹիւնը պէտք է եռանդուն կերպով աշխատի անհրաժեշտ բէֆօրմները մտցնելու համար Թիւրքիայում։

—Բօէրական գեներալներ Բոտա, Դէվէտ եւ Դէլարէյ հրատարակել են հետեւեալ կոչը՝ ուղղված «ամբողջ քաղաքակիրթ աշխարհին»։ «Ամենքը դեռ լաւ յիշում են, որ բօէրները, 2½ տարի իրանց անկախուԹեան համար պատերազմ մղելուց յետոյ, ստիպված էին իրանց պատգամաւորների միջոցով Ֆէրէնինգէնում ընդունել խաղաղուԹեան այն պայմանները, որ առաջարկեց նրանց Էդուարդ VII Թագաւորի կառավարուԹեանը։ Մի եւ նոյն ժամանակ պատգամաւորները յանձնարարեցին մեզ ուղեւորվել Անգլիա, որպէս զի խնդրենք մեր նոր կառավարուԹիւնից ԹեԹեւացնելու այն ահռելի կարիքը, որ տիրում է ամեն տեղ նոր գաղԹականուԹիւնների մէջ։ ԱնաչառուԹեան դէպքում մենք պէտք է դիմէինք քաղաքակիրթ աշխարհի մարդասիրական զգացմունքներին եւ խնդրէինք աջակցուԹիւն նուիրատուուԹիւններով։ Մինչեւ այժմ մեր փորձերը ստանալու անգլիական կառավարուԹիւնից աւելի լայն օգնուԹիւն մեր ժողովրդի համար անհետեւանք անցան, եւ որովհետեւ կարիքը աննկարագրելի է, ուստի մեզ ուրիշ ելք չէ մնում, եԹէ ոչ դիմել Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր ազգուԹիւններին։ Այն կրիտիքական օրերում, որ մենք կրեցինք, մեզ եւ բոլոր մերայիններին միմիԹարական էր անդադար ստանալ բոլոր երկիրներից համակրուԹեան արտայայտութիւններ։ Աշխարհի բոլոր կողմերից՝ ստացված դրամական եւ այլ օժանդակուԹիւնները կենարծնացրած բանակներում փակված մեր կանանց եւ երեխաների, ինչպէս նաեւ մեր գերիների համար անչափ։ Նպաստեցին այդ Թշուառները ի վիճակի բարելաւման, եւ մենք օգուտ ենք քաղում այս դէպքից՝ յանուն նախկին հանրապետուԹիւնների ազգաբնակուԹեան ջերմ շնորհակալուԹիւն յայտնելու անցեալում մեզ օգնուԹիւն ցոյց տուողներին։ Բօէրական փոքրիկ ժողովուրդը երբէք չի մոռանայ այն օգնուԹիւնը, որ ստացաւ իր տանջանքների մռայլ ժամերին։ ՀանրապետուԹիւնների ազգաբնակուԹիւնը պատրաստ էր զոհելու ամեն ինչ անկախուԹեան համար, եւ այժմ, երբ պատերազմը վերջացած է, նա բոլորովին աւերված է։ Թէպէտեւ մենք հնարաւորուԹիւն չենք ունեցել ճշդուԹեամբ հաշուելու բոլոր աւերածները, այսուամենայնիւ մեր անձնական փորձով համոզված ենք, որ անգլիացիները աւերել եւ այրել են պատերազմի ժամանակ ոչ պակաս քան 30,000 տներ եւ ագարակներ, նոյնպէս եւ բազմաթիւ գիւղեր։ Մեր բնակարանները, նրանց մէջ եղած բոլոր շարժական կայքերով, այրված են կամ աւերված, պտղատու ծառերը կտրատված, բոլոր գիւղատնտեսական գործիքները կոտրված, ջրաղացները ոչնչացրած, բոլոր ընտանի կենդանիները մորթված կամ տարված։ Մեզ մօտ ոչինչ չը մնաց։ Երկիրը անապատ է դարձել։ Պատերազմում սպանվեցին բազմաթիւ բուրգէրներ եւ այժմ երկրի մէջ տիրում է այրիների եւ որբերի լացու կոծը։ Հարկ չը կայ յիշեցնելու, Թէ ինչ մեծամեծ միջոցներ են հարկաւոր բուրգէրների որդոց կրԹուԹեան համար։ Այս մեծ կարիքի մէջ մենք դիմում ենք ամբողջ քաղաքակիրթ աշխարհին՝ խնդրելով օգնել իրանց նուիրատուուԹիւններով որբերին, այրիներին, ինվալիդներին եւ ուրիշ կարօտեալներին ու բաւարար կրԹուԹիւն հայԹայԹել մեր մանուկներին։ Մենք յիշեցնում ենք պատերազմի զարհուրելի հետեւանքները նրա համար, որ ծանօԹացնենք բոլորին մեր Թշուառ դրուԹեան հետ եւ ոչ Թէ մտքերը յուզելու նպատակով։ Սուրը դրված է այժմ պատեանի մէջ եւ բոլոր տարաձայնուԹիւնները պէտք է լրեն այս ահռելի կարիքի առաջ։ Պատերազմի գործած աւերումները անկարագրելի են, այնպէս որ օգնուԹիւնը, որ պէտք է ցոյց տայ Անգլիան, համաձայն խաղաղուԹեան պայմանների, նոյնիսկ եԹէ տան անգամ աւելի էլ լինէր, բաւական չի լինի ծածկելու մինչեւ անգամ պատերազմական կորուստները։ Անգլիական այս նպաստից որբերը, այրիները ինվալիդները եւ կարօտեալները, յոգուտ որոնց բացառապէս մենք հանդէս ենք գալիս այս կոչով, կը ստանան շատ քիչ եւ շատ դէպքերում գուցէ եւ ոչինչ։ Բոլոր նուիրատուուԹիւնները կը մտցնվեն «Het generale Boeren—Hulp—Fonds» կոչված դրամարկղը եւ այս ֆոնդը գործ կածվի բացառապէս բաւարարուԹիւն տալու այն անձանց կարիքներին, որոնց համար հաւաքվում են նուիրատուուԹիւնները։ Մենք խոնարհաբար խնդրել ենք, որ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ գտնվող կոմիտէները միաբան գործեն եւ մենք ինքներս էլ պատրաստվում ենք այցելել հերԹով այդ երկիրները՝ կոմիտէներին կարեւոր կազմակերպուԹիւնը տալու համար»։

—Լուրերին նայելով՝ բօէրական գեներալները վճռել են հրաժարվել իրանց մտադրուԹիւնից՝ ճանապարհորդելու Եւրոպայում, վերադառնալ կրկին Լօնդոն եւ խնդրել Զեմբերլէյնից, որ նոր խորհրդակցուԹիւն նշանակէ։ Այս խորհրդակցուԹեան ժամանակ նրանք մտադիր են խնդրել անգլիական կառավարուԹիւնից, որ նա դրական աւելի մեծ օգնուԹիւն ցոյց տայ բօէրներին՝ քան որոշել էր առաջ, որովհետեւ եւրոպական ցամաքի վրա անհնար է դտնել այդ օգնուԹիւնը։ Անգլիական ինիստրական շրջաններում դէմ են այսուհետեւ անփոխարինելի գումարներ տալուն պետական գանձարանից յոգուտ բօէրների, բայց հնարաւոր են համարում փոխառուԹիւն տալը ագարակատէրներին։ Վերջացնելով իրանց գործերը Լօնդոնում՝ գեներալները իսկոյն կը վերադառնան հարաւային Աֆրիկա։ Նրանց ճանապարհորդուԹիւնը Եւրոպայում կասկածելի դարձաւ, ի միջի այլոց, եւ նրա համար, որ եւրոպական կառավարուԹիւններից մի քանիսը յայտնեցին, Թէ Թոյլ չեն տայ իրանց պետուԹիւնների մէջ որեւէ ցոյց՝ ուղղված Անգլիայի դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՕՏԻՍԱՑ ԳՕՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 սեպտեմբերի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Սեպտեմբերի 17-ին, ժամի 2-ին, տեղի ունեցաւ Բարձրագոյն այցելուԹիւն Սեւ-ծովեան նաւատորմի նաւերին, որ տեւեց 3 ժամ։ Թագաւոր Կայսրը Թագուհի Կայսրուհու հետ միասին, ուղեկցուԹեամբ Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի, այցելեց ծովապետական դրահակիրները եւ միւս նաւերը։ Երեկոյեան քաղաքը եւ նաւահանգստի բոլոր նաւերը լուսավառված էին։

ԽԱՐԲԻՆ։ Զօրքերի ելքը հարաւային Մանջուրիայից սկսվեց։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Բարձրագոյն այցելուԹիւնից յետոյ նաւատորմին, Թագաւոր Կայսրը նշանով յայտնեց իր առանձին բաւականուԹիւնը։

ԲԱԳՈՒ։ Անդրկովկասեան երկաԹուղու գլխաւոր մահացու կերպով վիրաւորված կօնտրօլեօր Գէդէվանօվ վախճանվեց, առանց ուշքի գալու։ Ոստիկանական պահնակները ձերբակալեցին երկու մօլօկանների. մէկի հագին, բանւորական շապկի տակ, գտնված է արիւնոտ պիդժակ եւ ատրճանակ։ ԵնԹադրում են, Թէ սպանուԹիւնը կատարված է սխալմամբ։—Հարեւան կուպէում գտնում էր Բագուի մի հարուստ վաճառական։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Այցելելով նաւատորմը՝ Նոցա ՄեծուԹիւնները ապա գնացին տեսնելու «Екатерина II» զրահակիրը, որտեղ Նոցա ՄեծուԹիւնները բարեհաճեցին փորձել կերակուրը եւ ողորմածաբար հարց ու փորձ անել հիւանդանոցում այդ ժամանակ գտնվող հիւանդի առողջուԹեան մասին։ Մանամանաբար նայելով զրահակիրը՝ Նոցա ՄեծուԹիւնները այցելեցին «Три Святителя» զրահակիրը, որ նոյնպէս մանրամասնաբար նայեցին։ ԱյցելուԹիւնից յետոյ Նոցա ՄեծուԹիւնները ուղեւորվեցին դէպի Կայսերական «Штандартъ» զբօսանաւը։ Այսօր Նոցա ՄեծուԹիւնները պէտք է այցելեն Խերսօնի պեղումների տեղը։

ՊԵԿԻՆ։ Պրինց Զուն, կայսրի եղբայրը, ամուսնացաւ գերագոյն քարտուղար Իւնգ-Լուի աղջկայ հետ։ Իւնգ-Լու Չինաստանի ամենաբարձր եւ ամենազգեցիկ աստիճանաւորն է։ Ասում են, Թէ ամուսնուԹիւնը տեղի է ունեցել գահի համար ժառանգ ունենալը ապահովելու նպատակով։ Բարձրագոյն աստիճանաւորները առարկում են այդ բանի դէմ։

ՍՕՖԻԱ։ Երէկ Շիպկայի բարձրուԹիւնների վրա, Մեծ-Իշխանի, բոլգարական իշխանի եւ ռուս գեներալների ներկայուԹեամբ, ներկայացվեցին այն պատերազմները, որոնք տեղի են ունեցել 1877 Թ-ի օգոստոսի 21-ին, 22-ին եւ 23-ին։ Ապա Ս. Նիկոլայի լերան վրա կատարվեց հոգեհանգիստ Ալէքսանդր II, Ալէքսանդր III կայսրների, Մեծ-Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ Աւագի եւ այն զինուորների համար, որոնք ընկան ազատուԹեան պատերազմում։ Ապա պակներ դրվեցին Մեծ-Իշխանի, բոլգարական իշխանի, մինիստրների խորհուրդի, ռուսական եւ բոլգարական ընկերուԹիւնների եւ մասնաւոր անձերի կողմից։ Բէյխսարատի պագամաւոր Կլօֆաչ պակ դրեց չեխական ժողովրդի կողմից։

ԲԵՐԼԻՆ։ Մաքսային տարիֆները քննող մասնաժողովը նոյնուԹեամբ Թողեց այն որոշումը, որ ընդունված էր առաջին ընԹերցման ժամանակ հացահատիկների մինիմալ տաքսի վերաբերմամբ եւ մերժեց Գանի առաջարկը մաքսը բարձրացնելու մասին։

ՇԻՊԿԱ։ Այստեղ մեծ տպաւորուԹիւն է գործում գեներալ Բօգդանովիչի բրօշիւրը, որ կը բերում է «Տաճար-արձան Շիպկայում» վերնագիրը։ Բրօշիւրից բաժանվեց ժողովրդին եւ զինուորներին աւելի քան 10,000 օրինակ։

ԿԱՉԱՆԼԻԿ։ Նոցա ԲարձրուԹիւնների ներկայուԹեամբ կատարված զօրամարզուԹիւնները Շիպկայի մօտ վերջացան։ Մինչեւ ժամի 12-ը ներկայացվեցին Շէյնօվոյի մօտ տեղի ունեցած կռիւները, որոնք եղել են 1877 Թ-ի դեկտեմբերի 27-ին եւ 28-ին։ Կրկնվեցին Սկոբելեվի եւ Սվետոպոլկ-Միրսկու զօրաբաժինների գործողուԹիւնները՝ աջակցուԹեամբ Բաղեցկու եւ Ռէսսէլ փաշայի անձնատուր լինելը քառասուն հազար զօրքով։ Ամեն ինչ կատարվեց հանգստուԹեամբ եւ դիմացկանուԹեամբ, որ ճանաչված է բոլոր ներկայ գտնվողներից։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ «Որոշումների ժողովածուի» մէջ հրատարակված է Բարձրագոյն հրաման մի քանի կանոնների փոփոխուԹեան մասին, որոնք վերաբերում են քաղաքացիական մասի աստիճանաւորների ծառայուԹեան եւ որոնցով Թոյլ է տրվում ծառայելու երկրի մէջ Ռուսաստանի ընակիչներին։ Միատեսակ իրաւունքներ Հէլսինգֆօրսի համալսարանի հետ ստանում են բոլոր ռուսական համալսարանների եւ Դէմիդովսկի իրաւաբանական լիցէյի կանդիդատները ու իսկական ուսանողները, ինչպէս նաեւ իրաւագիտական ուսումնարանը եւ զինուորական իրաւաբանական ակադեմիան աւարտողները։ Զէ Թոյլատրվում այլ եւս դիմել սենատին յանուն Նորին ՄեծուԹեան։ Դիմումները տրվում են սենատի անունով։ Դանգատները եւ խնդիրները յանուն Նորին ՄեծուԹեան ուղարկվում են ընդունված կարգով։ Անպայման կերպով մնում են առանց քննուԹեան, ի միջի այլոց, այն խնդիրները, ուղերձները եւ դանգատները, որոնք տրվում են մի խումբ անձաց կողմից, որոնք երկրի կարիքների վերաբերմամբ միջնորդուԹիւններ յարուցանելու պատրուակով դատապարտում են կառավարուԹեան գործողուԹիւնները կամ ձգտում են խախտել

հասարակաց կարգը եւ խաղաղութիւնը։ Վերցված է սենատի պրոկուրորի իրաւունքը նկատողութիւն անելու գեներալ-նահանգապետին եւ անձամբ ամբաստանագիր գրելու նրա վրա Թագաւոր Կայսրին։

19 սեպտեմբերի

ՍԵՎԱՍՏՈՊՕԼ։ Ցերեկվայ 2½ժամին Նոցա Կայսերական Մեծութիւնները Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի, կայսերական պալատի մինիստրի, զօրքերի հրամանատար կոմս Մուսին-Պուշկինի, գեներալ-ադիւտանտ Գէսսէի, փոխ-ծովապետ Բօժդեսավլենսկու, կոմս Բէկլեշովի, Ցրէյլինա իշխանուհի Օբոլենսկու, իշխանուհի Օրբելիանիի, քաղաքապետի, պալատական քահանայ Եանիշեւսկու եւ շքախմբի ուղեկցութեամբ ժամանեցին Խերսոնի վանքի ստորին տաճարը, որտեղ Նրանց դիմաւորեցին երեք եպիսկոպոսներ—Տուրիկեան եպիսկոպոս Նիկոլայ, վանահայր Իննոկենտի եւ եպիսկոպոս Անտոնի։ Եպիսկոպոս Նիկոլայ դիմաւորեց Նոցա Մեծութիւններին ճառով եւ մատուցեց երկու պատկեր։ Համբուրելով ս. Վլադիմիրի նշխարները՝ Նոցա Մեծութիւնները ներկայ եղան ժամերգութեան եւ նայեցին վերին տաճարը։ Այնտեղից Նոցա Մեծութիւնները կառքերով ուղեւորվեցին պեղումների թանգարանը, որտեղ Նրանց դիմաւորեց թանգարանի կառավարիչ Կոստուչկո։ Նոցա Մեծութիւնները նայեցին պեղումներն այն պատի, որ բացված է 1899 թուականին, եւ բարեհաճեցին իջնել ցած, ու նախկին քաղաքի մակերոյթով՝ անցան ամբողջ պատի երկայնութեամբ եւ ապա գնացին դէպի արձան-տաճարը, որ կանգնեցրած է հին քրիստոնեաների գերեզմանի վրա. այստեղ Նորին Մեծութիւնը իջաւ կատակոմբները 4½ ժամին Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին վերադառնալ քաղաք։

ԿԱԼՕՖԻՐ։ Այսօրվայ զօրահանդէսը փառաւոր աջողութիւն ունեցաւ.—30,000 զինուորներից բաղկացած զօրքը անցնում էր հիանալի կերպով։ Ներկայ էին Մեծ Իշխանը եւ իշխան Ֆերդինանդ։ Զօրահանդէսից յետոյ, հանդիսաւոր ճաշի ժամանակ, բոլգարական իշխանը կենաց բաժակ առաջարկեց Թագաւոր Կայսրի եւ ամբողջ Արքայական Տան համար, իսկ Մեծ Իշխանը—բոլգարական իշխանի, զօրքի եւ բոլգար ժողովրդի խաղաղ առաջադիմութեան համար. մինիստր Պալրիկով բաժակ առաջարկեց ռուսաց զօրքի համար։ Ժամի 2-ին Մեծ Իշխանը Կազանլիկի եւ Ստարայա Զագորայի վրայով ուղեւորվեց Բուրգաս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հորեքշաբթի, սեպտեմբերի 18-ին, ժամի 2½-ին, բոլգարացի պօրուչիկ Սիրմանով արծաթեայ պսակ դրեց բոլգարական ժողովրդի կողմից ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխան Նիկոլայ Նիէօլալեվիչի գերեզմանի վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս
ԲԳԻ, ԲԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

ԵՂԲ. Գ. ԵՒ Մ.
ՓՐԻՏՕՆԵԱՆՑԻ ՏՆԿԱՐԱՆՑ
Սկրա կայար. Անդրկով. երկաթուղ. Գանանցների հասցէն՝ Թիֆլիս, Սերգիեվսկայա փ. № 11։ Կատարեալ ուղարկվում է Ֆրիպպէս։ 2—4

ՄԻ ՀԱՑ ՏԻԿԻՆ
որ աւարտել է Թիֆլիսի իգական գիմնազիան եւ Ժրնեվի համալսարանը, ցանկանում է դասեր ունենալ առարկաներից, ռուսերէն եւ գիւաւորապէս Ֆրանսերէն լեզուներից։
Դիմել առաւօտեան ժամի 10—4-ը՝ Веляминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.
10—10

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Տէլէֆոն № 617
Այսօր, ուրբաթ, սեպտեմբերի 20-ին, Խարկովի ռուսաց օպերայի խմբի արտիստները կը ներկայացնեն
ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ
օպերա երեք գործողութեամբ եւ 7 պատկերով, երաժշտութիւն Չայկովսկու։
Մասնակցում են՝ տ.տ. Զարինա, Արցիբաշեվա, Կարամզինա-Ժուկովսկայա, Դոբրժանսկայա, Սկօրուպսկայա, Գրինչենկո, պ. պ. Բոնաչիչ, Սունցով, Սերգէեվ, Կազիմիրով, Պետրով, Խարիդոն, Սվօբոդին եւ ուրիշներ։
Բալէտը կը կազմակերպէ բալետմէյստէր Մենաբէնի։ Նոր դէկօրացիաները պատրաստել է դէկօրատոր—նկարիչ Նովակ. կոստիւմները սեփական արհեստանոցից։
Կապէլմէյստէր Լ. Գ. Շաէյնբէրգ. Խորմէյստէր Ա. Գ. Զվէրժինսկի։ Ադմինիստրատոր Մ. Դուրանտին։
Սկիզբը երեկոյեան ժամի 8-ին։
Կասսան բաց է ամեն օր, առաւօտեան ժամի 10-ից մինչեւ 3-ը եւ երեկոյեան 6-ից մինչեւ ներկայացման վերջը։
Ազգ։ Վաղը, շաբաթ, սեպտեմբերի 21-ին, կը ներկայացվի «Դէյմօն»։ Կիրակի, սեպտեմբերի 22-ին, տեղի կունենայ առաջին հանրամատչելի ներկայացում, իջեցրած գներով. կը ներկայացվի «Ֆաուստ»։
Դեղարուեստական մասի կառավարիչ Ի. Փիթօեվ։ 1—1

ՀՐԱՒԷՐ
Ամսիս 22-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի մէկին՝ լինելու է Վանաց մայր եկեղեցու ծխականների ժողով 1900 եւ 1901 թուականների հաշուետուութիւնները քննելու։ Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին՝ որոշած օրը եւ ժամին չնորհք բերել նոյն եկեղեցին՝ նշանակած զբաղմունքներին մասնակցելու համար։
Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ՝
1—2 Գրիգորիս քահ. Երզնկեանց

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ
բ. գրքոյկի ա. մասը—Հին ուխտի ս. պատմութիւններ—սպառվեց. նորից տպագրվում է, եւ մինչեւ սեպտեմբերի վերջը լոյս կը տեսնի։
Եզնիկ ա. ք. Երզնկեանց
4—4

ԲԺԻՇԿ ՄՈՒԼԻՆ
ընդունում է ամեն օր կոկորդի, քթի եւ ականջի հիւանդութիւններ ունեցողներին, ժամը 11—1 առաւօտեան եւ ժամը 4—6-ը երեկոյեան։ Սուդերնայա փողոց, № 30։
4—14

ԲԱԳՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Հ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 31-ից, իսկ դասաւանդութիւնը սեպտեմբերի 9-ից։
Դպրոցական ծրագրի հետ միասին աշակերտները անցնում են պահանջվելիք առարկաները գիմնազիա, ռէալական եւ վաճառականական դպրոցները մտնելու համար։
(Ցիցիանովսկայա եւ Կարանտինայա փողոցների անկիւնում)։
4—10

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ
Ընդունելութիւն՝ պատրաստականի բոլոր բաժանմունքները եւ I ու II դասարանները։ Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 6-ին։ Բէհրութեան փողոց, սեփական տուն, № 29.
6—6

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Շուշի քաղաքի Ագուլեաց եկեղեցու համար, ինչպէս յայտարարել եմ, հարկաւոր է
ՄԻ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒ։
Ցանկացողները կարող են դիմել ինձ, ոչ ուշ, քան մինչեւ ներկայ սեպտեմբերի 25-ը, հետեւեալ հասցէով. Шуша, ктитору Хачатуру Хачатурянцу. 3—6

Ներկայ սեպտեմբերի ամսի 27-ին, առաւօտեան 10 ժամին, Թիֆլիսի դուստրի դահլիճում, տեղի կունենայ
Թիֆլիսի նահանգի ազնուականութեան արտակարգ ժողովը
ՔՆՆԵԼՈՒ ԵՒ ՎՃՌԵԼՈՒ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՐՑԵՐԸ
1) Թիֆլիսի նահանգապետի հաղորդագրութիւնը՝ գրված այս տարվայ օգոստոսի 23-ին՝ բանկի զուտ արդիւնքը բաժանելու եղանակի մասին։
2) Հաղորդագրութիւն հիմնարկու անդամների դրամները յետ տալու կարգի մասին։
3) Թիֆլիսի ազնուականների բանկի արդիւնքը բաժանելու կարգի մասին։
4) Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների ազնուականութեան Բարձրագոյն չնորհված 40,000 ռուբլու գործադրութեան մասին երիտասարդ սերունդի կրթութեան եւ դաստիարակութեան համար։
5) Հիմնարկու անդամների դրամներից նուիրատուութիւններ անելու մասին։
6) Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ-Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնայի Օգոստափառ հովանաւորութեան տակ գտնվող՝ պատմական եւ ժամանակակից հագուստների ցուցահանդէսի գլխաւոր կոմիտէի նամակի ընթերցումը։
7) Ազնուականների տան վարչութեան նախագահի ընտրութիւն։
8) Ազնուականների ժողովները փոխանակ մարտ ամսուա, յունվարին հրաւիրելու վերաբերմամբ միջնորդութեան յարուցումն։
1—1

ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ՄԻՄԻԱՑՆ 10 ՕՐՈՎ
Սեպտեմբերի 20 ից մինչեւ Հոկտեմբերի 1-ը
ԵՂԲ. ԽՈՒԴԱՎԵՐԴԻԵԱՆՆԵՐԻ
խանութում նշանակված է
Անցեալ տարիների սովորութեան համեմատ՝ այս տարի եւս
ՉԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Սեղմնից մնացած՝ տղամարդկանց բոլոր ձմեռվայ հագուստների, որոնք առանձնացրած եւ վերջնական գներն նշանակված են էտիկէտների վրա կապոյտ մատիտով
Ստացված են նոյնպէս
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ տղամարդկանց, կանանց եւ երեխաների ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ, պատրաստված ամենավերջին տարազով
Ընդունում ենք նաեւ
Մեր սեփական կտորներից ԱՄԵՆԱՑՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԻՐՆԵՐ, թէ եւրոպական եւ թէ ֆրանսիայ—աշակերտական, ստացված արտասահմանեան եւ ռուսական ամենայայտնի գործարաններից։
ԳՆԵՐԻ ԷԺԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՈՔ ՉԷ ԿԱՐՈՂ ՄՐՑԵԼ
1—10

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
(ПОЛНЫЙ РУССКО-АРМЯНСКІЙ СЛОВАРЬ)
Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Լոյս տեսաւ երկրորդ պրակը։ Գինն է 1 ր., ճանապարհածախսով 1 ր. 15 կ. բոլոր 10 պրակների բաժանորդագինն է 6 ր. Մինչեւ երրորդ պրակի լոյս տեսնելը 3 ր. ուղարկողը կը համարվի բաժանորդ եւ անյապաղ կը ստանայ արդէն լոյս տեսած պրակները։ Դիմել հեղինակին. Тифлисъ, Армянская Семинарія, А. С. Дагбашьяну. Կամ книжный магазинъ „Гутенбергъ“.
1—2

ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕНТСТВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ ВЪ РОССІИ
(**Тифлисъ,** Головинскій проспектъ, домъ Абіянца)

Предлагаетъ почтеннѣйшей публикѣ Граммофоны, самые усовершенствованные, по удешевленнымъ цѣнамъ, а также безшумныя пластинки къ нимъ, исполненныя на **ГРУЗИНСКОМЪ, АРМЯНСКОМЪ** и **ТАТАРСКОМЪ** языкахъ.

Кромѣ означенныхъ пластинокъ Главное Кавказское Агентство Общества Граммофонъ въ Россіи имѣетъ въ продажѣ громадный выборъ неподражаемыхъ безшумныхъ пластинокъ, исполненныхъ самыми лучшими, самыми знаменитыми артистами и артистками Русской Императорской оперы Московскихъ и Петербургскихъ театровъ, съ которыми интересно познакомиться черезъ усовершенствованный граммофонъ преимущественно той части публики, которая обитаетъ въ предѣлахъ отдаленной Сибири, Китая, Монголіи, Манчжуріи, Тибета, Персіи, Индіи, Афганистана, Белужистана и другихъ государствъ, и которая, такимъ образомъ, не имѣетъ возможности лично слышать восхитительное пѣніе и музыку артистовъ.

ИЗЪ ИСПОЛНИТЕЛЕЙ Агентство особенно рекомендуетъ слѣдующихъ артистовъ: Ф. ШАЛЯПИНА, Д. Южина, Д. Собинова, Н. Фигнеръ, М. Михайлову, Л. Брагину, Р. Бернарди, А. Давыдова, Г. Морскаго. Н. Ростовскаго, И. Никитина, Н. Шевелева, К. Серебрякова, Д. Бухтоярова, Н. Сѣверскаго, г-жу Медею Мей Фигнеръ, М. Вольфъ-Израэля, А. Цабеля, А. Гоппъ, О. Больма. С. Морозова, Знаменитую исполнительницу цыганскихъ романсовъ А. Вяльцеву, Р. Раисову, Н. Тамара, А. Сивачева, дуэтистовъ Романченко, ПЕТРА ЕМЕЛЬЯНОВИЧА НЕВСКАГО.

ТРЕБУЙТЕ КАТАЛОГИ
ГЛАВНОЕ КАВКАЗСКОЕ АГЕНТСТВО ОБЩЕСТВА ГРАММОФОНЪ ВЪ РОССІИ
10—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ
ԴՈԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։
Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктора химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.
5—26

Дозволено Цензурою, Тифлисъ, 19 Сентября 1902 г.
Электропечатная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.